Հավելված
Թումանյան համայնքի ավագանու
2018 թվականի փետրվարի 21-ի թիվ 10-Ն որոշման

ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1.Թումանյան համայնքի 2018 թվականի բյուջեի վարչական մասի տարեսկզբի ազատ մնացորդը՝ գումարով 9274,028հազ. դրամ ուղղել համայնքի ոչ Ֆինանսական ակտիվների գծով(կապիտալ) միջոցառումներին:
2.Համայնքի սեփականություն հանդիսացող հողերի իրացումից նախատեսել 884.150հազ. դրամ մուտք:
3.Բյուջեի ընթացիկ ծախսերում կատարվող փոփոխությունները ըստ ոլորտների.
1)Բաժին (Ոլորտ)4. Տնտեսական հարաբերություններ.
Ծրագիր 01.
Միջոցառումներ:Ճանապարհային տրանսպորտ.
Նախատեսել ճանապարհային տրանսպորտի գծով ընթացիկ ծախսեր դրամաշնորհների տեսքով 5000.0հազ. դրամ,
2)Բաժին (Ոլորտ)5. Շրջակա միջավայրի պաշտպանություն.
Ծրագիր 01.
Միջոցառումներ:Թումանյան համայնքում աղբահանության և սանիտարական մաքրման նպատակով նախատեսված ընթացիկ ծախսերը պակասեցնել 8000.0հազ. դրամով,
3)Բաժին (Ոլորտ) 6.Բնակակարանային շինարարություն և կոմունալ ծառայություն.
Ծրագիր 01.
Միջոցառումներ: Նախատեսել ջրամատակարարման գծով ընթացիկ ծախսեր դրամաշնորհների տեսքով 3000.0 հազ. դրամ,
4)Բաժին (Ոլորտ) 11. Հիմնական բաժիններին չդասվող պահուստային ֆոնդեր.
Հիմնական բաժիններին չդասվող պահուստային ֆոնդերը ավելացնել 1459.0 հազ. դրամով, պակասեցնելով պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե կատարվող հատկացումը նույն գումարի չափով:
4.Կապիտալ ծրագրերում կատարվող փոփոխությունը ըստ ոլորտների.
1)Բաժին (Ոլորտ)1. Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ.
Ծրագիր 01.
Միջոցառումներ:Ոչ Ֆինանսական ակտիվների գծով (կապիտալ)միջոցառումներ.
Համայնքապետարանի աշխատանքային պայմանների բարելավման նպատակով ավելացնել <<Մեքենաներ և սարքավորումներ>>ձեռք բերելու համար 5000,0 հազ.դրամ ծախս,
2)Բաժին (Ոլորտ)9. Կրթություն.
Ծրագիր 01.
Միջոցառումներ:Ոչ Ֆինանսական ակտիվների գծով (կապիտալ)միջոցառումներ.
Քարինջ բնակավայրի ՆՈՒՀ ՀՈԱԿ-ի շենքային պայմանների բարելավման համար ավելացնել 3700,0 հազ.դրամ ծախս:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԼԵՎՈՆ ՋԱՎԱՐՅԱՆ